ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 20 » հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Ս. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-55/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.07.2016թ. թիվ 1/73-3/18439-16 գրությամբ ներկայացված Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02556646) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.04.2016թ. թիվ 11/679 գրության հիման վրա, 18.04.2016թ. թիվ 1/73-3/12270-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին

(այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18439-16 գրությամբ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել Ընկերությանը Ցուցակում ներառելու ընթացակարգ:

<u>2. Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն 27.07.2016թ. D-11/185 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 16.03.2016թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներկայացրել է հավելված N 2 հայտարարությունը, որով հայտնել է, որ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընկերության հաշվապահության կողմից փոխանցում է կատարվել «Արարատբանկ» ԲԲԸ-ում (այսուհետ նաև՝ Բանկ), սակայն Ընկերության տնօրենի ստորագրության բացակայության պատճառով, Բանկն Ընկերության կողմից 16.03.2016թ. ներկայացված վճարման հանձնարարականի կատարումը կասեցրել է՝ վավերապայմանի անհամապատասխանության պատճառով և կատարել է հաջորդ օրը՝ 17.03.2016թ., կից ներկայացնելով «Արարատբանկ» ԲԲԸ-ի 21.07.2016թ. թիվ 14/261 տեղեկանքի պատճենը:

Ընկերությունը տեղեկացվել է այդ մասին հայտի N 2 հավելվածով հայտարարությունը ներկայացնելուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ Ընկերությունը գտնում է, որ վերջինիս կողմից չի ներկայացվել կեղծ տվյալ:

3. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ոստիկանությունը 04.04.2016թ. թիվ 11/679 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-55/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 14.07.2016թ. թիվ 1/73-3/18439-16 գրությամբ ներկայացված Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ոստիկանության կողմից մեդալների և կրծքանշանների պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ***(16.03.2016թ.)*** չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝

Կարգ) կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ***2016թ. մարտի 16-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4285586 ՀՀ դրամի չափով:

5. Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն 04.04.2016թ. Կենտրոնին ուղղված թիվ D-11/91 գրությամբ հայտնել է, որ հավելված N 2 հայտարարությունը ներկայացնելուց առաջ՝ Ընկերության հարկային պարտավորությունների դիմաց վճարումը կատարելու նպատակով հաշվապահության կողմից 16.03.2016թ կատարվել է փոխանցում «Արարատբանկ» ԲԲԸ, սակայն Բանկն Ընկերության կողմից 16.03.2016թ. ներկայացված վճարման հանձնարարականի կատարումը կասեցրել է՝ վավերապայմանի անհամապատասխանության պատճառով (Ընկերության տնօրենի ստորագրության բացակայության պատճառով) և փոխանցումը կատարվել է հաջորդ օրը՝ 17.03.2016թ., ինչի վերաբերյալ Ընկերությանը հայտնի է դարձել միայն Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելուց հետո:

6. «Արարատբանկ» ԲԲԸ-ի 21.07.2016թ. թիվ 14/261 գրության համաձայն՝ Ընկերության կողմից ***16.03.2016թ.*** ներկայացված վճարման հանձնարարականի կատարումը կասեցվել է՝ վավերապայմանի անհամապատասխանության պատճառով և կատարվել է 17.03.2016թ.:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 14.07.2016թ. թիվ 1/73-3/18439-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-55/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2016թ. թիվ 1/73-3/12270-16 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 14.07.2016թ. թիվ 1/73-3/18439-16 գրությունը, Ընկերության 04.04.2016թ. թիվ D-11/91 գրությունը, «Արարատբանկ» ԲԲԸ-ի 21.07.2016թ. թիվ 14/261 տեղեկանքի պատճենը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ***ներկայացրել է կեղծ փվյալ:***

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և *պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:*

ՀՀ ոստիկանության կողմից մեդալների և կրծքանշանների պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՈՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին Ընկերությունը մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (16.03.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուի, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն ***2016թ. մարտի 16-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4285586 ՀՀ դրամի չափով:

Կենտրոնն արձանագրում է, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն հայտի հավելված N 2 հայտարարությունը 16.03.2016թ. ներկայացնելուց առաջ, հարկային պարտավորությունների դիմաց վճարումը կատարելու նպատակով **նույն օրը՝ 16.03.2016թ.** «Արարատբանկ» ԲԲԸ-ի միջոցով կատարել է համապատասխան փոխանցում, սակայն Բանկն Ընկերության կողմից 16.03.2016թ. ներկայացված վճարման հանձնարարականի կատարումը կասեցրել է՝ վավերապայմանի անհամապատասխանության պատճառով (Ընկերության տնօրենի ստորագրության բացակայության պատճառով) և վերոհիշյալի հետևանքով փոխանցումը կատարվել է միայն հաջորդ օրը՝ 17.03.2016թ., ինչի մասին Ընկերությանը հայտնի է դարձել Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելուց հետո:

Վերոհիշյալ փաստը հաստատվել է նաև «Արարատբանկ» ԲԲԸ-ի կողմից տրված 21.07.2016թ. թիվ 14/261 գրությամբ, ըստ որի Ընկերության կողմից 16.03.2016թ. ներկայացված վճարման հանձնարարականի կատարումը կասեցվել է՝ վավերապայմանի անհամապատասխանության պատճառով և կատարվել է 17.03.2016թ.:

Այսպիսով, Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն 16.03.2016թ. կատարել է փոխանցում «Արարատբանկ» ԲԲԸ, որից հետո միայն, համոզված լինելով, որ այլևս չունի չկատարված հարկային պարտավորություններ պետության հանդեպ, «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտի հավելված N 2 հայտարարությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնն արձանագրում է, որ նման պայմաններում հնարավոր չէ հաստատել Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացումը, քանի որ հայտը ներկայացնելու օրը, կատարելով հարկային պարտավորության վճարը, Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն իրավաչափորեն համոզված է եղել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, այն է՝ 2016թ. մարտի 16-ին, չի ունեցել ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն գնման գործընթացի շրջանակում չի ներկայացրել կեղծ տվյալ, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն առկա չեն:

Ուստի Կենտրոնն առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 14.07.2016թ. թիվ 1/73-3/18439-16 գրությամբ ներկայացված Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02556646) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-55/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան